

ողբացի: Հայց դեռ ինչե՛ր տեսայ, ի՛նչ անմեղ կանայք, ի՛նչ անմեղ տղայք տեսայ, որ ոչ իրենց կորուստը միայն կ'ողբային՝ այլ գազանաբարոյ արաբացուող սուրերու եւ շղթայներու տակ կը հեծէին. իմ ոտքերս թափուած անմեղ արեանց վրայ լաիրժ սահեցան. քաղաքներ, ականներ, գիւղեր, որ շէն եւ ուրախ տեսեր էի, ագռաւներու, բուերու եւ գիշակեր գազանաց բնակարան տեսայ: Հարցո՛ւ քու խղճմտանքիդ, մի թէ քու այդ ձեռքդ, մաքուր է այդ արիւններէն, քու միտքդ մասնակից եւ պատճառ եղած չէ՞ կանանց եւ որդուոց դառն արտասուաց: Բայց կ'ուզես իմանալ թէ ո՞վ եմ. իմացի՛ր. ես եւ իմ ընկերներս սասունցիք եմք. Խուրթեցի Յովնան կ'ըսեն ինձ:

— Սակայն ինձմէ ի՛նչ կ'ուզես դու, մա՛րդ, ես ի՛նչ ըրած եմ քեզ, եւս ի՛նչ ըրած եմ քու խուրթեցուցոցդ, ի՛նչ է, որ դատաստան ունիմ, կ'ըսես. եթէ դատաստան ունիս ո՞ր եմ դատաւորներդ, ո՞ր եմ վկայներդ, ո՞ր դատախազքդ:

— Մինչեւ որ քու ընկերներդ չի հասնին, մինչեւ որ դատախառներդ չի հասնին՝ կարելի չէ, որ դատաստանը սկսինք: Բայց նոքա էլ չեն ուշանայ, հիմա սուրհանդակներ կը հանենք մենք գամենք ըստ կարի ժողուելու, եւ այսպէս արդարութիւնը պետք է տեղը երթա: Արդարութիւնը գթութենէ առաջ...

Այս միջոցիս երիտասարդ արեղայ մը ներս մտաւ ձեռքը երկու թուղթ մաքուր գրուած եւ Յովնանու տուաւ. իսկ նա զգուշութեամբ կար դա լեն վերջ. «Հատ բարի», ըսաւ եւ ծոցէն ոսկի մատանի մը հանեց, թուղթերը նոյնպէս նամակի ձեւով ծալեց եւ վրայները նոյն կնիքով կնքեց: Երբ այդ գործողութիւնները լմացուց՝ ելաւ եւ մօտենալով Մուշեղայ, որ ամէն բան կասկածոտ աչօք կը դիտէր՝

— Ահա՛ քու մատանիդ, որ կարծէիր թէ աւագակներն յափշտակէր են, նոքա լաւ տղաք էին եւ ինձի բերին, որ քեզ դարձնեմ, միայն որպէսզի արդարութիւնը տեղը գտնէ պետք էր այս մատանին այս երկու թղթերը կնքէր: